## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Ճ-2 ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 2018թ սեպտեմբերի 10-ին կնքված պայմանագրում 2018թ հոկտեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի ֆինանսական միջոցների հատկացում:

Փոփոխության նկարագրություն: Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ: Համաձայնագրի գինը կազմում է 96 199 000 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ կառավարության 09.08.2018թ. թիվ 925-Ն որոշում և 10.09.2018թ. կնքված թիվ ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Ճ-2 պայմանագրի 8.5 կետ:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ՀԲՄԱԾՁԲ-2018/17Ծ-2-1**
**Պետության կարիքների համար շինարարական աշխատանքների կատարման**

ք. Երևան <<12>> հոկտեմբեր 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինպլյուս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Նազարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018թ օգոստոսի 9-ի թիվ 925-Ն որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018թ. սեպտեմբերի 10-ին կնքված ՏԿՆ-ՀԲՄԱԾՁԲ-2018/17Ծ-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն Պայմանագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

**Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 129999600 (հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

**2. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011020733
ՀՎՀՀ 02565518

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Շինպլյուս>> ՍՊԸ
ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220553330550000
ՀՎՀՀ 00891777

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
<< >> 2018թ. կնքված
N ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/17Ծ-2-1 համաձայնագրի

**Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց**

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| [redacted] | | | | | | | | | | | | | | |
| 1 | Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 2+000 հատվածի հիմնանորոգման | - | - | - | - | - | - | - | - | - | - | 96199000 | 96199000 | 96199000 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

...պորտի, կապի և տեղեկատվական
...ոլոգիաների նախարարություն
...ան, Վազգեն Սարգսյան 3/3
...րոնական գանձապետական
ՀՀ 9000 020733
ՀՎՀՀ 0 65518

ԿԱՏԱՐՈՂ

<<Շինպլյուս>> ՍՊԸ
Երևան, ...
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220553...055...
ՀՎՀՀ 00...7